ՀԱՂԹԵ՛Լ ԵՆՔ
ՉԵ՛ՆՔ ՁԻՋԻ
ԿՁԱՐԳԱՆԱ՛ՆՔ

ՄԻԱՍԻՆ

Արցախի Հանրապետության 2020թ. Համապետական ընտրություններ

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ ընտրող

Հայ Յեղափոխական Դաշնակցության (այսուհետ՝ ՀՅԴ) նախընտրական ծրագիրն անդրադառնում է մեր կյանքում առկա հիմնախնդիրներին և առաջարկում է դրանց լուծման ուղիները: Զարգացման այս հանգրվանում մեր երկրում լուրջ փոփոխություններ են անհրաժեշտ: Պետության գլխավոր խնդիրը երկրի և ժողովրդի անվտանգության ապահովումն է, հասարակության արժանապատիվ կյանքի համար պայմանների ստեղծումը: Ժողովրդավարական հասարակարգի կառուցումը, սոցիալական արդարության և օրենքի գերակայության հաստատումն Արցախի Հանրապետության (այսուհետ՝ ԱՀ) հզորացման, ճանաչման և խաղաղության պահպանման հիմնական պայմանն է:

Դաշնակցությունն իր գործունեության ողջ ժամանակահատվածում ապացուցել է, որ ամենադժվարին պահերին մշտապես կանգնած է ժողովրդի կողքին և պատրաստ է հետևողականորեն իրականացնել հայրենիքի հզորացմանն ուղղված ծրագրերը, անշահախնդիր ծառայել ժողովրդին ու պետությանը:

ՀՅԴ նախընտրական ծրագիր

Արտաքին քաղաքականություն: Արցախի հիմնախնդիր

ԱՀ արտաքին քաղաքականության հիմնական նպատակն Արցախի հիմնահարցի, որպես Հայ Դատի բաղկացուցիչ մասի, լիարժեք լուծումն է խաղաղ ճանապարհով՝ Արցախում անցկացված համաժողովրդական հանրաքվեների և Սահմանադրության հիման վրա, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում: Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը միացյալ հայրենիք կերտելու միջանկյալ հանգրվան է: «Զարգանալ՝ չզիջելով» սկզբունքը Դաշնակցության համար Արցախի հզորացման և հարցի լուծման հիմնական առանցքն է:

Այդ նպատակով անհրաժեշտ է՝

- պետության նախաձեռնությամբ, համահայկական մակարդակով մշակել և ընդունել Արցախի խնդրի կարգավորման միասնական հայեցակարգ, որտեղ կհստակեցվեն հայկական կողմի հիմնական մոտեցումներն ու տեսլականը,
- մշակել և ընդունել արտաքին քաղաքականության հայեցակարգ,
- համախմբել հայրենիքի և Սփյուռքի ներուժն Արցախյան հարցի լուծման գործընթացում,
- ԱՀ անվտանգության և միջազգային ճանաչման ասպարեզում առավել կենսունակ դարձնել պետության հետ ՀՅԴ Հայ Դատի գրասենյակների և հանձնախմբերի համագործակցությունը,
- բարեկամ երկրների հետ նպատակաուղղված աշխատանքներ ծավալել՝ ընդլայնելով այդ պետություններում ԱՀ դիվանագիտական մարմինների ներկայությունը,
- Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ) շարունակի լինել ԱՀ անկախության և անվտանգության երաշխավորը,
- ՀՀ և ԱՀ միջև կնքել ռազմաքաղաքական համագործակցության պայմանագիր,

- բանակցային գործընթացում ԱՀ-ն պետք է մասնակցի որպես լիիրավ բանակցող կողմ:

ԱՀ տարածքային ամբողջականությունը տարածաշրջանի կայունությունն ու խաղաղությունը երաշխավորող հիմնական գործոններից է:

ԱՀ իշխանությունները պետք է՝

- ամուր կեցվածք ունենան երկրի տարածքային ամբողջականության պահպանման և վերականգնման գործընթացում,
- չեզոքացնեն հակաարցախյան քարոզչությունը և միջազգային հանրությանն ընկալելի դարձնեն ԱՀ-ում ընթացող ժողովրդավարական գործընթացները: ■

Անվտանգություն և պաշտպանություն

Երկրի անվտանգությունը և բանակի մարտունակությունը բարձրացնելու համար ՀՅԴ-ն առաջնահերթ է համարում՝

- բնակչության պաշտպանվածության մակարդակի բարձրացումը,
- զինված ուժերում ծառայելու արժանավայել պայմանների ստեղծումը և բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավման համար անհրաժեշտ փոփոխությունները,
- սպայական կազմի աշխատավարձերի շարունակական բարձրացումը և սոցիալական արտոնությունների ընդլայնումը, այդ թվում՝ բնակարանային հիմնախնդիրների լուծումը:
- ժամկետային զինծառայողների սոցիալ-կենցաղային և անվտանգային պայմանների բարելավումը,
- պարտադիր, ժամկետային և պրոֆեսիոնալ պայմանագրային ծառայության արդյունավետ համադրումը,
-պրոֆեսիոնալ-կամավոր զինվորական ծառայության շրջանակի ընդլայնումը,
- բանակի լիակատար ապաքաղաքականացումը,
- նախազորակոչային տարիքի երիտասարդների ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակությունը, ինչպես նաև

նախնական զինվորական պատրաստության դասավանդման պայմանների արմատական բարելավումը,

- Ազգ-Բանակ հայեցակարգը պետք է լինի ժողովրդի բարոյա-հոգեբանական սկզբունքների կերտման հիմնական ուղղությունը:

Վճարովի համակարգում սովորած և մասնագիտություն ստացած անձինք, որոնք իրենց աշխատանքային գործունեությունը որպես զինծառայող կշարունակեն բանակում՝ հինգ տարվա ընթացքում պետության կողմից կմարվեն նրանց ուսման ծախսերը:

Բանակում ծառայությունից խուսափած անձինք չպետք է ստանձնեն պետական բարձր պաշտոններ: ■

Կրթություն և գիտություն

Դաշնակցությունը կրթության և գիտության դերը տեսնում է նախևառաջ երկրի անվտանգությանը, տնտեսական և ռազմական հզորացմանը ծառայելու մեջ:

Գիտության ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝ գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը:

Կրթության համակարգը կոչված է ձևավորելու մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանի զարգացած, ինքնակազմակերպման ընդունակ, հայրենասիրության, մարդասիրության ու ազգային պետականության համար հպարտության ոգով դաստիարակված քաղաքացիներ:

Կրթության համակարգն էական բարեփոխումների կարիք ունի:

Մենք գտնում ենք, որ անհրաժեշտ է՝

- նոր մակարդակի բարձրացնել կրթական համակարգում հայրենասիրական և ազգային դաստիարակություն պարունակող ծրագրերն ու նախաձեռնությունները,

- ընդլայնել նախադպրոցական կրթության համակարգը՝ բացելով նոր մանկապարտեզներ: Խրախուսել այս ոլորտում մասնավոր ներդրումները՝ կառավարություն-համայնք-ներդրող երկարաժամկետ պայմանագրային հարաբերությունների ձևաչափը և այն առավել գործնական դարձնել: Այս ասպարեզում վերջին հինգ տարիներին Դաշնակցություն-կառավարություն-համայնք համագործակցությունն արդյունավետ էր և հանրության համար շահեկան: Դա կնպաստի նաև ծնելիության աճին և կանանց զբաղվածության խնդիրների լուծմանը,

- համատեղել ուսուցման և դաստիարակության գործընթացները, նոր մեթոդներով վերականգնել արտադպրոցական դաստիարակության համակարգը,

- ընդլայնել արհեստագործական ուսումնարանների ցանցը և այն համապատասխանեցնել ԱՀ տնտեսական զարգացման հեռանկարին: Տվյալ կրթօջախներում ստեղծել նյութատեխնիկական ժամանակակից

բազա,

- երկրի համաչափ զարգացման կարևորությունը նկատի առնելով՝ շրջաններում բացել միջին մասնագիտական քոլեջներ և ընդլայնել ուսուցանվող մասնագիտությունների ցանկը,
- ուսուցիչների և կրթական հաստատությունների աշխատողների աշխատավարձը բարձրացնել յուրաքանչյուր տարի,
- սահմանամերձ և վերաբնակեցվող բնակավայրերում երիտասարդ մանկավարժ մասնագետներին տրամադրել բնակարաններ,
- դպրոցներում ապահովել կառավարման կոլեգիալ համակարգ և թափանցիկ հաշվետվողականություն,
- լուրջ փոփոխության ենթարկել ավագ դպրոցների տեղաբաշխման մեխանիզմը՝ առանձնապես Ստեփանակերտում,
- միջոցներ ձեռնարկել ուսուցիչների և աշակերտների ամառային հանգիստը պատշաճորեն կազմակերպելու համար,
- մտավորականությունը պետք է կարողանա օգտվել այն հնարավորություններից, որը հատուկ է սոցիալապես ապահով խավերին,
- ձևավորել հավասար հնարավորություններ և որակյալ գիտելիքներ ապահովող համակարգ,
- տաղանդավոր երիտասարդներին արտերկրում ուսումը շարունակելու համար, վերադառնալու երաշխավորված պայմաններով, հատկացնել ֆինանսական միջոցներ,
- ձեռնարկությունների կողմից իրենց կադրային պահանջները բավարարելու նպատակով ուսուցումը ֆինանսավորելու հնարավորություններ ստեղծել,
- խրախուսել վճարովի հիմունքներով օտարերկրյա քաղաքացիների ուսուցումը և համապատասխան պայմանների ստեղծումը,
- անցնել անվճար բուհական կրթության,
- ստեղծել հիմնադրամ, որտեղ կենտրոնացված ֆինանսական միջոցները կօգտագործվեն մասնագետների տեղաբաշխման և համապատասխան ժամանակահատվածում աշխատանքային գործունեության ծավալման համար,
- բարելավել ուսանողների կենցաղային և հանրակացարանային

պայմանները,

- խթանել բուհական ինքնավարությունը,
- բուհական բնագավառի մասնագետներ հրավիրել ԱՀ, նրանց համար ստեղծել աշխատանքային և կենցաղային պատշաճ պայմաններ,
- մշակել համապատասխան ծրագիր՝ գիտական ներուժի պահպանման, երիտասարդացման, աշխուժացման համար: Բուհերը, մասնավորապես ԱրՊՀ-ն, դարձնել գիտական հիմնարար օջախ,
- մեծացնել գիտական և գիտատեխնիկական գործունեությանը պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորման ծավալները՝ հենվելով առարկայական առաջարկների կամ պատվերների վրա,
- խթանել համագործակցությունն ու ինտեգրումը ՀՀ և միջազգային գիտական կենտրոնների հետ,
- երիտասարդ գիտնականների, դասախոսների, ուսուցիչների համար իրականացնել «Մատչելի բնակարան» ծրագիրը,
- կադրային ներուժը նպատակային օգտագործելու և հանրային կյանքում նրանց պահանջված լինելու անհրաժեշտությունն ընդգծելու համար սահմանել մասնագետների ու պետական պաշտոնյաների կրթական ցենզ, որը ներկայացված կլինի համապատասխան անձնագրային ձևակերպումների տեսքով: ■

Պետահիրավական և պետական կառավարման համակարգ

ԱՀ-ում պետահիրավական և պետական կառավարման համակարգի ձևավորումը, անցնելով մի շարք հանգրվաններ, այսօր ևս ունի կատարելագործման և արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն:

Առանձին անհատների ցանկությունները, քաղաքական կողմնորոշումները կամ նախապատվությունները չպետք է նույնացվեն պետականության էության և նպատակների հետ:

Արցախի պետահիրավական և կառավարման համակարգն արտաքին համարկման / ինտեգրման / առումով պետք է ընկալելի և ընդունելի լինի աշխարհի համար, իսկ երկրում՝ սեփական ժողովրդի:

ՀՅԴ-ն համոզված է, որ պետահիրավական և պետական կառավարման համակարգի կատարելագործման համար ներկա փուլում առաջնահերթ են՝

- հասարակության մասնագիտական ներուժի համախմբման և ներքաղաքական կայունության ապահովման միջոցով պետահիրավական համակարգի կատարելագործման շարունակականությունը,
- ապահովել պետական ծառայողների պաշտպանվածությունը քաղաքական կոնյուկտուրայից,
- նոր սահմանադրության ընդունմամբ ապահովել օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների բաժանման և հավա-

սարակշռման սկզբունքների իրական և լիարժեք կենսագործումը, բացառելով գործադիր մարմինների՝ օրենսդիր մարմնի վերահսկողությունից դուրս գործելու հնարավորությունը,

- դատահիրավական համակարգի բարեփոխումներն իրականացնել իրավական պետությանը բնորոշ սկզբունքների հիման վրա,
- միջոցներ ձեռնարկել ԱԱԾ և ոստիկանական համակարգերը, բացառապես օրենքով իրենց վերապահված իրավասությունների շրջանակում գործելու ուղղությամբ, որով հասարակության մեջ կամրապնդվի վստահությունը նրանց նկատմամբ,
- պետական մարմինների, հատկապես վերահսկողական լիազորություններ ունեցող կառույցների կազմավորման գործում՝ ընդդիմության մասնակցության և իրական ազդեցության ապահովումը,
- խրախուսել ժողովրդի մասնակցությունը պետական կառավարմանը և ընթացքավորել նրա նախաձեռնությունները,
- կատարելագործել և ճշգրիտ մեխանիզմներ սահմանել քաղաքացիների կողմից հանրահավաքների, հանրաքվեների և հանրային հարցումների նախաձեռնության իրավունքի իրացման համար,
- ապահովել կառավարման համակարգի ապակենտրոնացում, որը ժողովրդավարության իրական հիմքն է,
- իրականացնել պետական կառավարման մարմինների կազմի, կառուցվածքի, հաստիքների լավարկում,
- ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և պատասխանատվությունը, կայացնել ավագանու ինստիտուտը, ինչպես նաև՝ շրջանային վարչակազմի ղեկավարի ուղղակի ընտրությունը,
- անհրաժեշտություն ենք համարում պետական կառավարման համակարգում երիտասարդների և կանանց առավել լայն ընդգրկումը: ■

Տնտեսական քաղաքականություն

ՀՅԴաշնակցությունը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում հաջողություններ արձանագրելու համար կորդեգրի նոր մոտեցումներ՝ հիմնված հասարակության բոլոր խավերի ու շերտերի շահերի պաշտպանության վրա:

ՀՅԴ-ն, լինելով ընկերվարական կուսակցություն, գտնում է, որ՝

- երկրի տնտեսական զարգացման գլխավոր խնդիրը բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի արմատական բարելավման ապահովումն է,
- ԱՀ հիմնահարցի և անվտանգության խնդիրների լուծումն ուղղակիորեն կախված է դիվերսիֆիկացված տնտեսության զարգացման վիճակից,
- անհրաժեշտ է մշակել ռազմավարական առաջնահերթությունների վրա հիմնված ազգային տնտեսական անվտանգության հայեցակարգ, որտեղ հստակ արտահայտված կլինի պետություն-մասնավոր գործընկերային հարաբերությունը,
- տնտեսական զարգացման հիմքը խելամիտ օրենսդրության վրա հիմնված, հասարակությանը վստահություն ներշնչող անկախ դատաիրավական համակարգի առկայությունն է, առանց որի անիմաստ է խոսել արդյունավետ ու մրցունակ տնտեսության մասին,
- երկրում որևէ տնտեսվարող սուբյեկտ չպետք է դուրս մնա օրենքի ենթակայությունից,
- տնտեսության զարգացման պայմաններից է պայքարը մենաշնորհների և մենատիրության երևույթների դեմ,
- հարկման և բաշխման չափորոշիչների հստակեցմամբ երաշխավորված կլինեն ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական կայունությունն ու սոցիալական արդարությունը,
- տնտեսության զարգացումը հնարավոր է ապահովել արտադրության կազմակերպումից մինչև ապրանքների իրացման մեխանիզմների ծրագրման և իրագործման իրատեսական գործիքակազմի հստակեցման պարագայում: Մենք գտնում ենք, որ կառավարությունն արտահայտված

դերակատարություն պետք է ունենա Արցախում արտադրված ապրանքներն արտաքին շուկաներում իրացնելու գործում,

- աշխատատեղեր ստեղծող գործարանները պետք է լինեն պետական աջակցության ներքո,

- հարկ է ընդլայնել պետության կարգավորող-վերահսկիչ դերն առանձնապես տնտեսության այն ոլորտներում, որոնք չեն կարող ինքնակազմակերպվել ու ինքնակազմավորվել,

- ազատ հասարակարգ ստեղծելու համար անհրաժեշտ է խորացնել պետության միջամտությունը շուկայական տնտեսության մեջ: Ազատ շուկայի գործունեությունը ոչ միայն չի բացառում կառավարության միջամտությունը, այլև այն դարձնում է անհրաժեշտ,

- խիստ կարևոր է բազմակացութաձև սեփականության (պետական, մասնավոր և կոլեկտիվ) համակարգի հավասարակշռված ու համամասնական զարգացումը:

Զբոսաշրջության բնագավառը պետք է դիտվի՝ որպես տնտեսության զարգացման կարևոր ճյուղ: Այս ուղղությամբ անհրաժեշտ է՝

- ձևավորել և կատարելագործել զբոսաշրջության ոլորտի զարգացումն ապահովող բարենպաստ օրենսդրական դաշտ,

-ենթակառուցվածքների բնագավառում ներդրումներ անելիս հաշվի առնել զբոսաշրջության ռազմավարական դերը տնտեսության մեջ և տարածքների համաչափ զարգացման գործում,

- ապահովել պետական աջակցություն՝ զբոսաշրջության այլընտրանքային ձևերի զարգացմանն ուղղված ծրագրերին,

- պետական աջակցության և հարկային բարեփոխումների միջոցով խրախուսել ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացումը:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ վերոհիշյալ ասպարեզում ՀՅԴ քաղաքականությունը հանգում է հետևյալին՝ արդար և ազատ պայմանների ապահովում, արտադրության արդյունքների արդարացի վերաբաշխում:

Բնապահպանություն

Բնության և կենսոլորտի պահպանումը Դաշնակցության գերակա ծրագրային ուղղություններից է, որի հիմքում մարդու և շրջակա միջավայրի

ներդաշնակ փոխհարաբերության և սերունդների համերաշխության սկզբունքներն են:

Ելնելով այդ հանգամանքից գտնում ենք, որ՝

- միայն խիստ և անկողմնակալ փորձագիտական ուսումնասիրությունների հիման վրա իրականացնել մետաղական և ոչ մետաղական հանքավայրերի ու ջրային ռեսուրսների շահագործումը,
- էներգետիկ համակարգի զարգացումը սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր բաղադրիչն է, սակայն ջրային ռեսուրսների հախուռն օգտագործումը բնապահպանական խնդիրներ և հանրային հիմնավոր անհանգստություն է առաջացնում, որոնց լուծումը հրատապ անհրաժեշտություն է,
- հատուկ քաղաքականությամբ խրախուսել անցումն այլընտրանքային էներգիայի վերականգնվող աղբյուրներին՝ խթանելով արևի և քամու էներգիայի վրա հիմնված էներգետիկ արտադրությունը,
- ապահովել ապօրինի ծառահատումների ու որսագողության կանխումը և անտառների վերականգնումը, բարելավել համապատասխան պետական ծառայության աշխատանքների որակը: ■

Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություն

Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունն անընդհատ կատարելագործման կարիք ունի: Այն կարող է լուծել սոցիալական հիմնախնդիրներ՝ միաժամանակ խրախուսելով տնտեսության առաջնային ճյուղերի զարգացումը, նպաստելով երկրում արտադրվող հարստության արդյունավետ օգտագործմանը և հայրենական արտադրության մրցունակության բարձրացմանը: Վերոհիշյալ քաղաքականությունն ինքնանպատակ չէ. այն տնտեսական զարգացման միջոց է: Հետևաբար, մենք դեմ ենք դրամավարկային քաղաքականության պասիվ-հարմարվողական բնույթին և մտադիր ենք այն վերածել տնտեսական քաղաքականության առանցքային լծակի: Դրա համար՝

- կմշակվի ռազմավարական առաջնահերթությունների վրա հիմնված ազգային տնտեսության անվտանգության հայեցակարգ, որով պետք է ձևավորվեն հարկային, բյուջետային և դրամավարկային քաղաքականության հիմնական չափանիշները,
- կապահովվի Ազգային ժողովի առավել արդյունավետ մասնակցությունը բյուջեի նախնական մշակմանը, կազմմանն ու կատարման վերահսկողությանը,
- պետական կառավարման ապակենտրոնացմանը զուգահեռ՝ կապահովվի կենտրոնացված և համայնքային բյուջեի ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորման գործընթացը՝ այն առումով, որ կարելի լինի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններին համապատասխան ֆինանսական միջոցներ գոյացնել,

- տարեկան բյուջեն կկազմվի ճյուղային և տարածքային կտրվածքով՝ ապահովելով բյուջետային քաղաքականության նպատակներ-միջոցներ-արդյունավետություն շղթայի քանակական և որակական միասնությունը,

- ապահովել բյուջետային միջոցների ծախսման խստիվ կանոնակարգման և այդ բնագավառում ֆինանսական կարգապահության բարձրացումը, մասնավորապես պետական միջոցների ծախսման նկատմամբ պատշաճ ֆինանսական վերահսկողության իրականացումը, ինչպես նաև ոչ արդյունավետ գործառույթներին դասվող ծախսերի կրճատումը,

- էապես պարզեցնել հարկային համակարգը՝ խուսափելով անհարկի թղթաբանությունից,

-ներդնել աճողական (պրոգրեսիվ) հարկային քաղաքականություն: Շատ վաստակողը պետք է ավելի շատ հարկ վճարի, քանի որ դրա միջոցով է հնարավոր վերացնել եկամուտների բևեռացվածությունը և սոցիալական անարդարությունը: Պրոգրեսիվ հարկման տրամաբանությունը կգործի նաև գույքահարկի պարագայում,

- ապահովել հավասար պայմաններ արդար մրցակցության համար՝ բացառելով հովանավորչությունը,

- հստակեցնել և պարզեցնել հարկային մարմինների գործողությունները բողոքարկելու մեխանիզմները,

- ապառք ունեցող ձեռնարկությունների համար ապահովել ներդրումներ անելու և ընթացիկ հարկերը վճարելու հնարավորություն,

-ապահովել փոքր ու միջին գործարարության, գյուղատնտեսության և արդյունաբերության բնագավառում ընթացիկ և կապիտալ վարկերի տրամադրման մատչելիություն,

- տարածքների համաչափ զարգացման անհրաժեշտությունից ելնելով՝ կառավարության համապատասխան ծրագրի շրջանակում՝ գյուղի և գյուղատնտեսության, ինչպես նաև ներդրումային հիմնադրամների կողմից կիրառել սուբսիդավորման տարբերակված քաղաքականություն: ■

Գյուղատնտեսություն

Փաստ է, որ երկրի գյուղական բնակավայրերը հիմնականում գտնվում են ոչ բարվոք վիճակում: Երկրի պարենային անվտանգության ապահովման, գյուղական բնակչության եկամուտների ավելացման, գյուղի սոցիալական զարգացման հիմնախնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է բազմակողմանի պետական աջակցություն ցուցաբերել գյուղատնտեսությանը:

ՀՅԴ-ն գտնում է, որ՝

- հզոր երկիր կառուցելու հիմնական գրավականը գյուղերի զարգացումն է,
- գյուղատնտեսության և գյուղի զարգացումը շաղկապված են, գյուղերը պետք է վերածվեն կայուն եկամտաստեղծ բնակավայրերի,
- խղճուկ վիճակում գտնվող բնամթերային տնտեսություններին անհրաժեշտ է պետության հովանավորությունը: Այդ ճանապարհով հնարավոր է անցումը դեպի եկամտաստեղծ ֆերմերային տնտեսություններին, ինչը լրջորեն կխթանի Արցախից գյուղմթերքների արտահանման ծավալները,
- ֆերմերային տնտեսությունները՝ որպես հիմնական պարենային ապրանքների արտադրողներ, պետք է աշխատեն կառավարության մասնագիտական-խորհրդատվական և ֆինանսական աջակցությամբ,
- անհրաժեշտ է ագրարային ոլորտում խրախուսել մանր գյուղացիական տնտեսությունների միջև կոոպերացիոն կապերի ստեղծումը, ընդլայնումը և զարգացումը: Մասնավորապես կառավարության հոգածության ներքո պետք է լինեն այն կոլեկտիվ տնտեսությունները, որոնք իրենց շուրջը կհամախմբեն գյուղական մտավորականների և զինծառայողների ընտանիքներին:

Առկա գյուղատնտեսական արտադրական հնարավորությունները չեն համապատասխանում գյուղատնտեսության զարգացման ՀՅԴ տեսլականին:

Ուստի մենք առաջարկում ենք՝

- հողի և գյուղտեխնիկայի սեփականատերերի միջև ստեղծել փոխշահավետ, ամուր իրավական հիմքերով երկարաժամկետ համա-

գործակցություն, որը պետք է լինի գործադիր իշխանության ուշադրության կենտրոնում, ինչպես նաև կյանքի կոչել գյուղտեխնիկայի սպասարկման և վերանորոգման արդյունավետ համակարգ,

- ներդնել գյուղատնտեսության ապահովագրական համակարգ և փոխհատուցել բնական աղետներից տուժած գյուղացիական տնտեսություններին,

- սերմնաբուծարանները, տնկարանային տնտեսությունները, տոհմային անասնաբուծական կայանները դարձնել պետական բաժնետիրական ընկերություններ,

- արմատապես բարելավել ոռոգման համակարգերը,

- ընդլայնել գյուղատնտեսական համակարգի վարկավորման ծավալները: Ապահովել այգիների հիմնման և տեղական հումքով գյուղատնտեսական մթերքների մշակման արտադրությունների կազմակերպման երկարաժամկետ վարկավորումը: Պետական աջակցությունը լինելու է թիրախային՝ խրախուսելով առավել բարձրարժեք գյուղատնտեսությունը,

- կարևորել գյուղատնտեսական մթերքների վերամշակման ձեռնարկությունների կամ նրանց մասնաճյուղերի հիմնադրումը և մասնագետների վերապատրաստումը:

ՀՅԴ արտերկրի կառույցները կարող են արտահայտված դերակատարություն ունենալ գյուղատնտեսության զարգացման, մասնավորապես արտաքին շուկաների ձևավորման գործում: Այս ուղղությամբ գտնում ենք, որ բավարար ուսումնասիրություններ չեն կատարվել մեր արտադրական հնարավորությունները միջազգային շուկաներում ներկայացնելու գործում: Գյուղատնտեսության արտադրանքի արտահանումը դիտում ենք մեր արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական գործիքներից մեկը: ■

Արդյունաբերություն և ձեռնարկատիրություն

Արդյունաբերության բնագավառում քաղաքականությունը, որը մեծ հնարավորություններ է ընձեռնում՝ լուծելու սոցիալ-տնտեսական արմատական խնդիրներ և բացելու մեծաթիվ աշխատատեղեր, հիմնականում պետք է հանգի հետևյալին՝

- անկախ սեփականության ձևերից, տնտեսվարողների համար հավասար պայմաններ ապահովող մրցակցային և ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծում,

- արտաքին տնտեսական արդյունավետ քաղաքականության իրականացում և արտահանումը խթանող համակարգի ձևավորում, որն այժմ գտնվում է անմխիթար վիճակում,

- գիտական ու գիտատեխնիկական ներուժի ներդրում արդյունաբերության ոլորտում: Այստեղ անհրաժեշտ է օգտագործել սփյուռքի ներուժը,

- բարձրացնել պետության պատասխանատվությունն արդյունաբերության նոր ոլորտների ստեղծման գործընթացում,

- առանձնակի ուշադրություն դարձնել շրջկենտրոններում և գյուղական համայնքներում կանանց աշխատատեղերի ստեղծմանը և համակարգչային, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը,

- փոքր և միջին բիզնեսի զարգացման համար պարզեցնել վարչական, իրավական, հարկային, վարկային համակարգերը: Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը կնպաստի միջին խավի ձևավորմանը, որը տնտեսական կայուն զարգացման և սոցիալական լարվածության մեղմացման երաշխիքն է,

- մտավոր սեփականության իրավունքի պաշտպանություն: Այն պետք է արտացոլի ստեղծագործողի, գիտնականի, ինժեների, գյուտարարի մասնավոր իրավունքը,

- իրավական մեխանիզմների հստակեցում, որոնք թույլ կտան բացառել իշխանության համակարգում գտնվող անձանց՝ ձեռնարկատիրությամբ զբաղվելու դեպքերը և իշխանական լծակները բիզնեսի հովանավորչության նպատակին ծառայեցնելը,

- ֆինանսական և վարկային շուկաներում մենատիրացման երևույթների բացառում,

- օրենքի պարտադրանքով բաց բաժնետիրական ընկերությունների միջոցով բնական մենաշնորհ ունեցող կազմակերպությունների կարգավիճակի փոփոխում,

- արտերկրի ներդրողների համար գործընկերային միջավայրի ձևավորում, որը խրախուսելի կդարձնի ներդրումները ԱՀ-ում:

ՀՅԴ-ն գտնում է, որ արդյունաբերության բոլոր ճյուղերի համաչափ զարգացմամբ և ծավալների ընդլայնմամբ է հնարավոր ստեղծել ավելի մեծ համախառն ներքին արդյունք, որն իր հերթին կբարձրացնի բնակչության կենսամակարդակը: ■

Հակակոռուպցիոն և հակահովանավորչական քաղաքականություն

Կոռուպցիայի և հովանավորչության դեմ համապարփակ պայքարի կազմակերպումը ՀՅԴ կողմից մշտապես դիտարկվել է որպես իրական ժողովրդավարության, երկրի կայուն զարգացման, քաղաքացիական հասարակության կայացման, սոցիալական արդարության և համերաշխության, օրենքի գերակայության հաստատման հիմնական գրավականներից մեկը:

Կոռուպցիան, կաշառակերությունը, հովանավորչությունը խանգարում են բարիքների, հանրային հարստության արդարացի բաշխմանը: Աղքատության վերացման հիմնական գործիքներից մեկը կոռուպցիայի դեմ պայքարն է: Կոռուպցիան սպառնում է ոչ միայն տնտեսական բարեփոխումներին, ներդրումների իրականացմանը, այլև քաղաքացիական հասարակության կայացմանը և երկրի ներքին կայունությանը: Այն սոցիալական, քաղաքական, տնտեսական, իրավական, բարոյական հիմնախնդիր է:

Կոռուպցիայի կանխարգելումը ենթադրում է համալիր միջոցառումների իրականացում հետևյալ ուղղություններով՝

- կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգի ընդունում գիտական, տնտեսական, հասարակական ու քաղաքական հիմնավորումներով,
- պետական գործառույթների իրականացման համար լիազորված անձանց իրավունքների, օրինական շահերի պաշտպանության և արժանավայել կենսամակարդակի ապահովում,
- պետական ծառայողների համակարգում բարոյական և կարգապահական նորմերի ամրագրում,
- հասարակական վերահսկողության համար գործուն պայմանների և մեխանիզմների ապահովում,
- քաղաքացիների եկամուտների հայտարարագրման մեխանիզմների կատարելագործում,
- օրենքներով ամրագրվող սահմանափակումների և պատասխանատվության մեծացման կիրառմամբ բիզնեսի և քաղաքականության

տարանջատման իրավակարգավորումների հետևողական զարգացում,
- ընդդիմության և քաղաքացիական հասարակության գործուն մասնակցությամբ ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի անկախ մարմին: ■

Մշակույթ

Արցախի Հանրապետության մշակութային քաղաքականության հիմնական նպատակն է՝ պահպանել և զարգացնել ազգային մշակույթը, ինչպես նաև քայլեր ձեռնարկել հասարակության մեջ գոյություն ունեցող հոռի և ապազգային երևույթների վերացման ուղղությամբ:

ՀՅԴ-ն վերոհիշյալ ասպարեզում կարևորում է հետևյալ սկզբունքները՝

- ապահովել մշակութային ծառայությունների հավասար հասանելիություն բնակչության բոլոր խավերի համար և տարածքային հավասարաչափ ներգրավվածություն,
-ապահովել քաղաքացիների՝ մշակութային ինքնադրսևորման լիակատար հնարավորություն,
- պայքար հակազգային բարքերի դեմ՝ հիմնական նպատակ ունենալով հայ ժողովրդի հոգևոր վերածննդի գործընթացը,
- համայնքներում մշակութային կյանքի աշխուժացում՝ մշակույթի տունդպրոց համագործակցության խրախուսմամբ, ինչպես նաև՝ արվեստի դպրոցների մասնաճյուղերի բացում գյուղերում,
- պետական օժանդակություն ստեղծագործական խմբերին,
- արտերկրում Արցախի մշակութային կյանքի ներկայացում,
- Սփյուռքի հետ կապերի ամրապնդում, արտերկրում գործող ՀՅԴ կառույցների ներուժի օգտագործում, նոր հարաբերությունների հաստատում միջազգային մշակութային կազմակերպությունների հետ,
-պատմաճարտարապետական հուշարձանների վերանորոգման ծրագրերին ֆինանսական օգնության ցուցաբերում,
- հնագիտական ուսումնասիրությունների ընդլայնում: ■

Երիտասարդություն և սպորտ

ՀՅԴ-ն գտնում է, որ երկրի առաջ ծառացած մարտահրավերները հաղթահարելու համար երիտասարդությանը պետք է վերապահել երկրի զարգացման առաջմղիչ ուժի դերակատարությունը:

Դրան հասնելու համար անհրաժեշտ է՝

- երիտասարդության համար ստեղծել ինքնադրսևորման լիարժեք հնարավորություններ,
- երիտասարդական կազմակերպությունների համար ապահովել պետական աջակցության հավասար պայմաններ,
- համայնքների մշակութային տների վերածումը մշակույթի և երիտասարդության կենտրոնների,
- բնակարանային խնդիրների լուծման համար երիտասարդ ընտանիքներին ցուցաբերել համակողմանի սոցիալական աջակցություն՝ տրամադրելով անտոկոս հիպոթեքային վարկեր,
- հասցեագրված քաղաքականություն իրականացնել երիտասարդների զբաղվածության ապահովման ուղղությամբ,
- աջակցել տաղանդավոր և շնորհալի երիտասարդների գիտական, ստեղծագործական ծրագրերի իրականացմանը՝ ընդգրկելով պետպատվերի մեջ,
- նպաստել մանկական և երիտասարդական սպորտ-ֆիզկուլտուրային ակումբների, կենտրոնների, ճամբարների ստեղծմանը,
- մարզական կառույցները և հանրակրթական դպրոցներն ապահովել ժամանակակից մարզագույքով և հանդերձանքով,
- արժանվույն գնահատել Եվրոպայի և աշխարհի առաջնություններում առաջնակարգ արդյունքներ արձանագրած մարզիկներին և մարզիչներին,
- զգալիորեն ավելացնել մարզական ֆեդերացիաներին հատկացվող ֆինանսական միջոցները,
- հարաբերությունների ընդլայնում միջազգային մարզական կազմակերպությունների հետ: ■

Հայրենադարձություն և Վերաբնակեցում

Հայրենադարձությունը և վերաբնակեցումն Արցախի համար ռազմավարական կարևորագույն խնդիր է, և ՀՅԴ-ն միշտ էլ աջակցել է այդ քաղաքականությանը: Մենք համոզված ենք, որ վերաբնակեցումն Արցախի հիմնահարցի լուծման ամենակարճ ճանապարհն է: Անհրաժեշտ է ստեղծել այդ աշխատանքների կազմակերպման և վերահսկողության գործնական համակարգ:

Ծրագրված նպատակային վերաբնակեցման քաղաքականությունը հնարավորություն կտա լուծել տնտեսական և քաղաքական մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես՝

- այն ռազմավարական նշանակություն ունի ԱՀ բնակչության աճի խթանման և երկրի անվտանգության ապահովման համար,
- կնպաստի ԱՀ տնտեսական զարգացմանը: Այդ առումով կարևոր է վերաբնակեցվող շրջանների և ԱՀ մյուս շրջանների միջև բնական տնտեսական կապերի ստեղծումը:

Վերոհիշյալ ծրագրի իրագործումն ենթադրում է՝

- գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր արտադրամասերի ստեղծում, վերաբնակեցված շրջաններում գյուղատնտեսության և արտադրության զարգացման համար արտոնյալ վարկերի տրամադրում,
- բնակիչներին տրվող արտոնությունների տրամադրման դյուրացում,
- հայրենադարձության համար բարենպաստ պայմանների ապահովում,
- Սփյուռքի ներուժի հնարավորինս լայն ընդգրկումով հայրենադարձության և վերաբնակեցման գործընթացի համահայկականության ապահովում,
- վերաբնակեցման քաղաքականությանը զուգահեռ՝ ներգաղթի և ներքին միգրացիայի քաղաքականության ամրագրում՝ այդ նպատակով առաջին հերթին ԱՊՀ-ում և ՌԴ-ում ապրող արցախցիների համախմբում և հայրենիք վերադարձի կազմակերպում,
- առաջնահերթության կարգով սահմանամերձ տարածքների յուրացում,
- Արցախի տարածքների համաչափ զարգացման տեսլականից ելնելով՝ ստեղծել տնտեսության և հանրային կյանքի պահանջարկ ունեցող

մասնագետների բանկ՝ դրա մեջ ներառելով ինչպես հանրապետության, ՀՀ-ի, այնպես էլ Սփյուռքի մեր հայրենակիցներին: ■

Աշխատանք և զբաղվածություն

Տնտեսական և սեփականության ձևերի վերաձևավորումներն առաջացրին էական փոփոխություններ աշխատանքային հարաբերությունների և բնակչության զբաղվածության բնագավառում:

Զբաղվածության ոլորտում պետության դերակատարությունը չպետք է սահմանափակվի անուղղակի միջամտությամբ: Պետությունը գործուն դերակատարություն պետք է ունենա բնակչության զբաղվածության և աշխատանքի ապահովման գործում:

Արդյունավետ և զարգացած աշխատաշուկայի ձևավորումը, առողջ, անվտանգ և ընդունելի պայմաններով աշխատանքի ապահովումն այն կարևոր դրույթներն են, որոնք պետք է ուղեցույց լինեն գործատու-աշխատող փոխհարաբերություններում:

Այս ոլորտում անհրաժեշտ է ստվերային հարաբերությունների դուրս մղում, զբաղվածության ոլորտների ընդլայնում, գործազրկության կրճատում, աշխատողների աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության ուժեղացում:

Աշխատանքի վարձատրության նվազագույն չափը պետք է սահմանվի կենսաապահովման նվազագույն զամբյուղի ոչ թե ձևական, այլ իրական արժեքի հաշվառմամբ: ■

Սոցիալական ոլորտ

Մեր երկիրը սոցիալական պետություն է, սա ամրագրված է ԱՀ Սահմանադրությամբ: Ելնելով այդ դրույթից պետական համակարգի հիմնական գործառույթներից մեկը պետք է լինի մարդկանց բարեկեցության ապահովումը և եկամուտների խելամիտ ու արդարացի վերաբաշխումը:

ՀՅԴ նախընտրական ծրագիրը հանրության հավանությանն արժանանալու պարագայում՝ սոցիալապես խոցելի և անպաշտպան շերտերը կենսական նվազագույն կարիքները բավարարելու հնարավորություն կունենան, իսկ նրանց տրամադրվող պետական աջակցությունը լինելու է հասցեական ու նպատակային: Սոցիալապես անապահով շերտերի արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը պետության պարտականությունն է, որի կատարմանը հետամուտ ենք լինելու:

Աշխատանքը լինելու է մարդկանց սոցիալական ապահովության և պաշտպանվածության գրավականը: Աշխատանքով ապահովված մարդը չպետք է ունենա սոցիալական լուրջ խնդիր, իսկ նրա կենսաթոշակային տարիները պետք է լինեն ապահով:

Հայեցակարգային լուծմամբ երաշխավորել այն, որ որևէ ձևով հնարավոր չլինի արդեն իսկ ձեռք բերված սոցիալական առաջընթացը նվազեցնել,

եթե այն պայմանավորված չէ այնպիսի օբյեկտիվ հանգամանքներով, ինչպիսիք ֆորսմաժորային դեպքերն են:

Սոցիալական բևեռացումը մեղմելու նպատակով նախատեսվում է՝

- կարիքավորության աստիճանը ճիշտ որոշել և անցնել հասցեագրված սոցիալական օգնության: Դա թույլ կտա ավելի շատ միջոցներ ծախսել՝ հօգուտ անապահով ընտանիքների,
- նոր ձևավորվող ընտանիքներին նպատակային ֆինանսական աջակցություն ցուցաբերել,
- ծնելիության աճի և բնակչության բնական վերարտադրողականության խրախուսման համար պետության ծրագրերն անընդհատ կատարելագործել,
- պարբերաբար բարձրացնել երեխայի ծննդյան նպաստի չափը և տարիքը, ներդնել երեխաների ծննդյան հաջորդականության պայմանական խրախուսման ամբողջական համակարգ: Երրորդ երեխայի ծննդյան հետ կապված նոր մոտեցում որդեգրել,
- զոհված ազատամարտիկների և հաշմանդամների ընտանիքներին համակողմանի հոգատարություն ցուցաբերել և էապես բարձրացնել նպաստները, ինչպես նաև համապատասխան օժանդակություն ցուցաբերել ձեռներեցությամբ զբաղվելու համար,
- արմատապես բարեփոխել ընտանեկան նպաստների համակարգը և պարբերաբար այն բարձրացնել,
- սպառողական զամբյուղի արժեքին մոտեցնելու տրամաբանությամբ՝ յուրաքանչյուր տարի բարձրացնել կենսաթոշակները,
- շարունակել բազմազավակ ընտանիքներին բնակարանով ապահովելու ծրագիրը,
- շարունակել և զարգացնել հիպոթեքային վարկավորումը՝ խրախուսելով գյուղական համայնքներում բնակարանային շինարարության գործընթացը,
- հնարավորություն ստեղծել, որպեսզի մարտական գործողությունների մասնակցած ԱՀ քաղաքացիները թոշակի իրավունք ձեռք բերելուց հետո ստանան զինված ուժերից զորացրված և նույնօրինակ կարգավիճակ

ստացած զինծառայողներին հավասարեցված պարգևավճարը,

- ԱՀ-ում ընդլայնել ՀՕՄ-ի և բարեգործական մյուս կազմակերպությունների գործունեությունը՝ ներառելով նոր ծրագրեր, որոնք միտված կլինեն աղքատության կրճատմանն ու սոցիալական լարվածության մեղմացմանը: ■

Առողջապահություն

Առողջապահության ոլորտում կարևորվում է կառավարման առավել արդյունավետ համակարգի ձևավորումը:

Բուժօգնության վճարովի ծառայությունների աճի և բնակչության վճարունակության սուղ հնարավորությունների պայմաններում՝ հասարակության ստվար հատվածը զրկվում է ժամանակին բուժվելու և անհրաժեշտ դեղամիջոցներ ձեռք բերելու հնարավորությունից:

Պետական բյուջեից առողջապահությանը հատկացվող՝ առանց այն էլ սուղ միջոցների զգալի մասը նպատակաուղղված է համակարգի պահպանմանը: Արդյունքում տուժում են բուժհիմնարկներն ու բուժաշխատողները: Արմատական բարելավման կարիք է զգում նաև սննդամթերքի հետ կապված վերահսկողությունը և բուժօգնության ստանդարտների և որակների վերահսկումը:

Այս բնագավառում արմատական փոփոխություններ կատարելու համար Դաշնակցությունը նախատեսում է՝

- բժշկական ծառայությունը բոլոր խավերի համար դարձնել անվճար,
- առանձնակի ուշադրություն դարձնել շրջանային և համայնքային առողջապահության զարգացմանը, վերջիններիս մասնագիտական և նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը,
- հեռավոր և սահմանամերձ բնակավայրերն ապահովել որակյալ բժշկական կադրերով և ծառայություններով,
- բուժաշխատողների աշխատավարձի ամենամյա բարձրացում իրականացնել, վերանայել բժիշկների վարձատրության համակարգը,
- բժշկական հաստատություններում նոր տեխնոլոգիաներ ներդնել,
- առողջապահության ոլորտում ներդնել ապահովագրական

ֆինանսավորման համակարգ,

- բարելավել բժիշկների վերապատրաստման և մասնագիտական կատարելագործման գործընթացը,
- ձեռնարկել գործնական քայլեր անհրաժեշտ պարագաներում ԱՀ քաղաքացիների բուժումը հանրապետությունից դուրս կազմակերպելու համար: Այդ նպատակով բյուջեում համապատասխան գումարներ նախատեսել: ■

Արցախ - Հայաստան - Սփյուռք հարաբերություններ

Արցախը հայ ժողովրդի միասնության գաղափարական և առարկայական առանցքն է: ԱՀ-ն, ելնելով համայն հայության ամբողջականության գաղափարի գիտակցումից, ազգային շահերը ներկայացնողի իր յուրահատուկ գործոնով կարևոր դերակատարություն ունի հայության համախմբման և հայապահպանման գործում:

Արցախ-Հայաստան-Սփյուռք բազմակողմանի կապերի ամրապնդումն ու զարգացումը պետք է հիմնված լինեն փոխշահավետ գործակցության վրա, որ ենթադրում է հետևյալ մոտեցումները՝

- հայ ժողովրդի տարբեր հատվածների միջև համազգային փոխըմբռնման, փոխվստահության, միասնության և համախմբվածության մթնոլորտի ապահովում,
- համահայկական քաղաքական, տնտեսական, մշակութային, կրթական խորհրդաժողովների, համաժողովների, հավաքների, ինչպես նաև այլ բնույթի միջոցառումների կազմակերպում ԱՀ-ում, իսկ ՀՀ-ում և արտերկրում անցկացվող նման միջոցառումներին՝ Արցախի մասնակցության ապահովում,
- ԱՀ, ՀՀ և Սփյուռքի միջև երկարաժամկետ համագործակցության ծրագրերի մշակում և իրականացում,
- համահայկական տեղեկատվական դաշտի ձևավորում և բազմակողմանի համագործակցության ծավալում,
- Սփյուռքի ներուժի, այդ թվում՝ գիտական, մասնագիտական և ֆինանսական մասնակցության ապահովում ԱՀ սոցիալ-տնտեսական հիմնահարցերի լուծման գործում: ■

Հրատարակիչ: ՀՅԴ ընտրական շտաբ - Արցախ
«Ոսկան Երևանցի» հրատարակչություն - Երևան 2020
տպաքանակ 500 օրինակ

Սիրելի հայրենակից

Վստահե՛ք Դաշնակցությանը և 2020թ. մարտի 31-ից մասնակիցը դարձեք այս ծրագրի իրագործմանը, որի արդյունքում կունենաք կայուն երկիր, կանխատեսելի ապագա: